№ 23 Փետրվարի 20 (Մարտի 4) 1879 Փետրվարի 20 (Մարտի 4) № 23

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ազգ օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեզ ինչ է պակաս։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ղարսից։ Նամակ Նիժից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Թիւրքիա։ Անգլիա։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Ցայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ՄԵԶ ԻՆՉ Է ՊԱԿԱՍ

Ամեն մարդ բաղդ և միջոց չունի բարձրագոյն ուսումը ստանալու, մանաւանդ մեր երկրի պէս երկրում, որի բնակիչներին բարձրագոյն ուսումը ստանալու համար հարկաւոր է թողնել իրանց երկիրը, իրանց ծնած տեղը և գնալ երկու, երեք հազար վերստ հեռու....

Մեզանում, Անդրկովկասում, մեր ամեն ազգութիւնների, ամեն ցեղերի ներկայացուցիչների երիտասարդութեան մեծամասնութիւնը ստիպված է, այդ պատճառով, բաւականանալ միմիայն տարրական և միջնակարգ ուսումով։ Այդպիսով մեր հասարակութեան զարգացման մակերևոյթը երբէք չէ բարձրանում, մանաւանդ որ բարձրագոյն ուսումը ստացած և իր հայրենիքը վերադարձած, մեծ մասամբ անաջող, թէ փիզիկապէս և թէ մտաւորապէս մաշված, փչացրած երիտասարդութիւնը մինչև այժմ անընդունակ է հանդիսացել բարձրացնել ամբոխի կրթութեան մակերևոյթը։

Ուրեմն մեր երիտասարդութեան մեծ մասը, ո՛ր ազգութեան կամ ո՛ր դաւանութեան և պատկանէր նա, մեծ մասամբ, ասում ենք, ստիպված է բաւականանալ տարրական և միջնակարգ ուսումով։ Այդ ուսումը աւարտելուց յետոյ մեր երիտասարդ սերունդը մտնում է իսկոյն գործնական կեանքի մէջ,—և այնուհետև էլ ոչինչ կրթողական ներգործութեան չէ ենթարկվում մինչև կեանքի վերջը, չէ շարունակում զարգանալ, անշարժ է մնում։

Ու, ճշմարիտ, ո՞րտեղ և ի՞նչ միջոցով մեր երիտասարդութիւնը պէտք է շարունակի մտաւորապէս զարգանալը.... Միմիայն լրագիրներ և գրքեր կան, որոնց միջոցով տարրական և միջնակարգ ուսում ստացածը կարող է շարունակել իր անձնակրթութեան գործը....

Բայց դորա համար հարկաւոր են հազար ու մի պայմաններ, որոնք շատ բէրին և շատ հազիւ են մատչելի լինում։

Հարկաւոր է որ մեր տեղական երիտասարդութիւնը գոնէ իմանար իր մայրենի լեզուն և սէր ունենար դէպի ընթերցանութիւնը, որ կարդար մեր տեղական լեզուներով հրատարակվող մամուլը, ընթերցասիրէր մեր տեղական լեզուներով տպվող ինքնուրոյն և թարգմանական գրքերը։ Հարկաւոր է որ մեր երիտասարդութիւնը իմանար բացի իր մայրենի լեզուից եւրոպական լեզուներից գոնէ մինը, որ կարողանար անընդհատ ընթերցանութեամբ լրացնել դպրոցում սրտացած թերի ուսումը։ Հարկաւոր է որ մեր թէ պետական և թէ ազգային-հոգևոր դպրոցները այնպիսի բարոյական զարկ տուած լինէին իրանց մէջ աւարտածներին, որ նրանք անհրաժեշտ, կենսական պահանջ համարէին գրքերի և լրագիրների կարդալով շարունակել իրանց կրթութիւնը։

Վերջապէս այնքան հեշտ չէ դպրոցում ուսումը վերջացնելուց յետոյ, ստիպել իրանց ամբողջ կեանքը կարդալ շարունակել.... Դորա համար հարկաւոր է բնաւորութեան զօրութիւն, հարկաւոր է մտաւոր ոյժ, հարկաւոր է սեփական ինիցիատիվ, հարկաւոր է ինքուրոյն, տոկուն կամք....

Այդ կողմից կենդանի խօսքը անշուշտ ունի մի մեծ առաւելութիւն համեմատելով մեռած տառի, տպված թերթի հետ։

Տպվածը պէտք է մարդը ինքնիրան ստիպի կարդալ և դրա համար հարկաւոր է պատրաստութիւն, այն ինչ կենդանի խօսքը, ազդելով մարդու արտաքին զգայարանների վրա, հեշտացնելով լսողի համար ուղեղն մտաժողական գործակատարութիւնը, ստիպում է նրան ակամայ ընդունել նոր միտքը և, եթէ այդպէս կարելի է ասել՝ բռնի, թէև իրան աննկատելի կերպով աշխատեցնում է անշարժութեան, ծուլութեան և անգործութեան սովոր խելքը։

Որտեղ դժբաղդաբար չը կայ բարձրագոյն դպրոց, որտեղ մասսան, ամբոխը պէտք է բաւականանայ իր մանկութեան ժամանակը դպրոցում ստացած ուսումով, և այնուհետև երբէք էլ չէ աշխատեցնում իր ուղեղը, իր սիրտն ու խելքը,—մանաւանդ մեր Թիֆլիս քաղաքի պէս մի քաղաքում, որտեղ մեծամասնութիւնը դպրոցից դուրս գալուն պէս զանազան շահաւէտ ձեռնարկութիւնների և փող վաստակելու ետևից է ընկնում, որտեղ նա ժամանակ չունի մտաւոր և բարոյական ինքնուրոյն կատարելագործվելու վրա մտածելու,—այդ տեսակ հասարակութեան մէջ անշուշտ հարկաւոր է մտաւորապէս զարգացնող կենդանի խօսքը....

Իսկ դա կարող է լինել գլխաւորապէս երեք տեսակի։

Մինը՝ եկեղեցու սեղանից մարդու սիրտը, միտքը և բարոյական զգացմունքը զարգացնող կենդանի խօսքը։ Բայց դժբաղդաբար դա անհնարին է ասել մեր տգէտ, ռամիկ հոգևորականութենից, որ աւելի տգէտ է, քան թէ ամբոխը։

Երկրորդ՝ գեղարուեստական ձևով թատրոնի բեմից տրվող, պիեսայի ձևով ներկայացրած մի որ և է հոգեբանական կամ հասարակական խնդիր։

Ու վերջապէս ամբիոնի վրայից ժողովրդացրած գիտութեան ձևով հրապարակական դասախօսութիւնը։

Բայց դժբաղդաբար մենք չունենք կենդանի խօսքի այդ երեք ձևերից և ոչ մինը։

Մենք չունենք բարոյագիներ, չունենք թատրոն, չունենք մշտապէս կարդացվող հրապարակական դասախօսութիւններ....

Ու այդ պատճառով մեր ամբոխը, մեր հասարակութեան մեծամասնութիւնը, որ ուրիշ ուսում չունի բացի շատ շատ միջնակարգ ուսումից, այն էլ չէ լրացնում ինքնակրթութեամբ, անընդհատ ընթերցանութեամբ,—այդ պատճառով, ասում ենք, մեր հասարակութեան մեծ մասը մշտական անշարժութեան և տգիտութեան մէջ է մնում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

9 փետրվարի

Ամսի 8-ին, Վարդանանց տօնի անմահ յիշատակութեան օրը, Ղարսի առաջնորդ հայր Աղուանեան այդ փառաւոր և սիրալի յիշատակութեան հետ միասին կատարեց տեղիս եկեղեցում հոգեհանգիստ այս ռուս տաճկական պատերազմում ընկած բոլոր քրիստոնէից հոգոց համար։ Պատարագը մատուցանում էր նորին սրբազնութիւնը, որոյ առեն խօսեց նա մի համառօտ և ազդու քարոզ, շատ դեղեցիկ և զգալի կերպով նկարագրելով Վարդանանց պատերազմի արդիւնքը և հետևանքը, և թէ ինչպէս հայոց եկեղեցին դարերի ընթացքում առանց օգնականի պատերազմելով խաչաբար կռապաշտութեան դէմ և ամենքից աւելի արիւն թափելով քրիստոնեական հաւատի համար կարողացաւ մինչև այժմ անդրդվելի և հաստատ մնալ և իր եկեղեցոյ բարձրագագաթ յատուկ գմբէթը անխորտակելի պահել աշխարհի առջև, բոլոր քրիստոնէից մէջ իր նախնական պարզ և մաքուր յատկութեամբը փայլելով, և քրիստոնէութեան անդրանիկ եկեղեցի լինելով։ Պատարագի երգերը երգում էին աշակերտները ձայնագրեալ եղանակով տետրակների վրա բաւականին լաւ։ Պատարագից յետոյ ձայնագրութեան ուսուցիչ պ. Տէր-Սարգսեանը երգեց Վարդանանց երգերից մի սրտաշարժ երգ, նորան ձայնակցում էին միւս ուսուցիչները, որոնք այդ օրը չնորհ էին արել յատկապէս շապիկ հագնելու։

Պատարագին ներկայ էին Ղարսի նահանգի զինուորական նահանգապետ Ֆրանկինին, իշխան Արղութեան երկայնաբազուկը, կուբինեան գնդի գնդապետը, պօլկովնիկ Շելկովնիկովը-նահանգապետի օգնականը և այլ շատ ատիճանաւորներ և բազում ժողովուրդ։

Այս օրերս տարածվեցաւ Ղարսում ծաղկի հիւանդութիւն և շատ երեխայք զոհ են գնում, նշանակված են ամեն թաղի համար բժիշկներ, որոնք հսկելու են հիւանդաց և առողջապահական կանոնների պահպանութեանը։ Տաճիկներին այս ամենևին հակառակ է և յիմարութիւն են համարում այդպիսի ցաւերի վրա հսկողութիւնը և նոցա ասելով Աստուծու ընդդէմ է այդ և նորա գործին չը հաւանել կը նշանակէ այդ, որովհետև Աստուած է վճռում և ուղարկում այդ ցաւերը աշխարհի վրա։

Օդը շատ փոփոխական է այստեղ, երբեմն սաստիկ ցրտում է և երբեմն շատ տաքանում։ Երկու օր է, որ սկսվել է տաքանալ օդը և հալվել ձիւնը։

Փայտը բաւականին էժանացել է, աշնան մի սայլ փայտը որ 7 ռուբլով էին ծախում, այժմ 3 ռուբլով են տալիս, ալիւրի պուդը 1 ր. 60 կ., գարին 80 կ., միս ֆունտը 9 մինչև 11 կ., ձուն 4 հատը մի շահի։

* * *

ՆԱՄԱԿ ՆԻԺԻՑ

—

9 փետրվարի

Խօսենք այս նիւթի վրա, դատենք այն առարկայի մասին և դարձեալ ուսումնարանը աչքից չը գցենք, չը մոռանանք մեր մտածողութեան առարկայ դարձնել նորան։ Չէ որ նա է, որ մարդուն կատարեալ մարդ է շինում, հասցնում է, գոնէ ձգտում է հասցնել, մարդուն իր իդէալին, մարդկութիւնը իր կատարելատիպին։

Անցեալ անգամ ես կամենում էի հին ուսումնարանի մասին խօսել, բայց չը յաջողեցայ։ Ի՞նչպիսի ուսումնարան է նա։—Մի ընդարձակ տան մէջ, որ կրում է իր վրա ուսումնարան անունը, հաւաքված 35—40-ի չափ աշակերտներ սպասում են առաւօտեան ուսուցչի գալստեան։ Ուսուցիչը գալիս է և մինչև երեկոյեան 2—3 ժամը պարապում է։ Միայն այդ անձն է ուսումնարանի վերակացուն, մայրենի լեզուի, ռուսաց լեզուի, թուաբանութեան և ամենայն բանի դասատուն։ Ուսումնարանական հարկաւոր պարագաների մասին, ինչպէս են քարտէզներ, կենդանաբանական պատկերներ և այլ նկարներ, ամենևին մի հարցնէք։ Բայց ուսումնարանը այս երկրորդ տարին է, որ բացված է. գուցէ նա ժամանակով առաջ գնայ, կասեն ինձ։ Ժողովրդի սառնասրտութիւնը աչքի առաջ ունենալով ես շատ կասկածում եմ, միայն ուսումնարանը հաստատ հիմք կունենայ, կարծում եմ, երկու անձերի պաշտպանութեամբ, որոնց մինը հայր Խամայեանցն է, իսկ երկրորդը պ. Թովմաս իւղբաչին (մի ժամանակ տանուտէր) գիւղումն։ Առաջինը արժ. Խամայեանցը, որ մի ժամանակ եղել է ուսանող բարձրագոյն ուսումնարաններից մէկում, մեծ վարկ ու ներգործութիւն ունենալով իր հօտի վրա, խրախուսում է և կարող է աւելի խրախուսել նրան ուսումնարանը պահպանելու և յառաջ տանելու (թէև վաղուց պարտ էր Խամայեանցը այսպէս վարվել)։ Երկրորդ անձը, պ. Թովմաս-իւղբաչին, թէև անուսում է և կրթութիւնից զուրկ, բայց իր բնական հասկացողութեամբ և խոհականութեամբ մեծ պատիւ և յարգանք է վայելում ժողովրդից։ Ուրեմն զարմացք չի լինի, եթէ ասենք, որ սա ևս կարող է մեծ օգուտ բերել ուսումնարանին, մանաւանդ եթէ այս պարոնը իւղբաչի ընտրվէր մօտակայ ընտրութեանց ժամանակ։ «Ժողովուրդը կոպիտ է, անհասկացող է, նրան հարկաւոր է մտրակել», ասում էր բարեկամներից մէկը։ Շատ ճշմարիտ համարելով այս խօսքերը, կասեմ որ պ. Թովմաս-իւղբաչին իր պաշտօնով լաւ մտրակ կարող էր լինել գիւղացիների համար։ Այդ մտրակը հարկաւոր է մանաւանդ այն բանի համար, որ գարնանը մըտածում են Նուխու յաջորդ արժ. Գրիգորիս Տէր-Յակոբեանցի յորդորանքով նոր ուսումնարան կառուցանել։ Արժանապատիւ Գրիգորիս վարդապետը արժանի է ամենայն շնորհակալութեան ու գովասանքի, որովհետև նորա շնորհիւ Նուխու վիճակում եղած գիւղերի համարեա մեծ մասը ունեն իրանց ուսումնարանները։ Անցեալ օրերը հայր Գրիգորիսը եկել է Նիժ ուսումնարանական գործով. խօսել է նոր ուսումնարան կառուցանելու մասին և 300 ր. մօտ նուէր ստորագրել տալով, հեռացել է իր տեղը։ Զատկին պէտք է նա նորից գայ ինչպէս այդ ստորագրված փողերը ժողովելու, այնպէս էլ նոր նուիրատուներ գտնելու համար։ Ցուսալի է, որ մօտ հազար բուբլի փող ժողովի ուսումնարանը կառուցանելու համար։

Վերջացնելով նամակս, աւելացնում եմ հետևեալ իրողութիւնը։—Անցեալ օրերը գիւղական մահմեդականների մօլլան խնդրել է Նիժի պատուելի հոգաբարձուներից մէկին թողնել, որ հայոց ուսումնարանում մօլլան ևս դասատուութիւն անի այն պայմանով միայն, որ իրանց մահմեդականների երեխաներն ևս իրաւունք ունենան այդ ուսումնարանում պարապելու։ Ցանկալի է, որ պատուելի հոգաբարձուն անուշադիր չը թողնէր մօլլայի այդ խելացի առաջարկութիւնը։

Նիժի ուսումնարանը պրոգրամմա չունենալով, ուսուցիչը պարապում էր առայժմ իր ձեռնհասութեամբ։ Այսպէս է հաւատացած եմ և միւս ուսումնարաններում։ Պրոգրամմա կազմողներին խորհուրդ կը տայինք միւս առարկաների թւում, որոնք աւանդվելու են Նիժի դպրոցի պէս ուսումնարաններում, մտցնել, իբր և ամենահարկաւոր առարկայ, և պարսկերէնը։

* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 6 փետրվարի

Բարեհաճեցէք ձեր լրագրի անկիւններից մինի մէջ տեղի շնորհել հետևեալ համառօտ տեղեկութեանցը պ. Ա. Երիցեանցի «Ներսէս հինգերորդ աշտարակեցի կաթողիկոսի կենսագրութիւն» ժողովածուի վերաբերութեամբ, որը իմ ներկայութեամբս Սարգիս արքեպիսկոպոսը բերանացի խօսեց, յիշեալ ժողովածուն իր մօտ կարդալուց յետոյ։

«Գովելի է պ. Երիցեանի աշխատութիւնը և ջանքը, ասաց նորին սրբազնութիւնը, յիշեալ կենսագրութեան ընթերցումը աւարտելուց յետոյ, որովհետև նա ստուգապատում գրած է. երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսի կենսագրութիւնը, որքան որ նա տեղեկութիւն է ստացել զանազան աղբիւրներից, սակայն նրա մէջ սպրդած կան փոքր ինչ թերութիւններ, որոնց պատճառը ոչ թէ ինքն պ. Երիցեանն է, այլ այն անհաւատի աղբիւրները, որոնցից նա իր աշխատութիւնը քաշած է։ Շատ ցաւում եմ, որ նա այդ կենսագրութիւնը աշխատասիրելու միջոցին առիթ չէ ունեցած դիմելու ինձ և քանի մի տեղեկութիւնք ևս ինձանից քաշելու. ես իմ կարողութեանս չափ այդ երկասիրութեան մէջ նորան չէի խնայի իմ օգնութիւնս, հաղորդելով մանրամասնաբար երջանկայիշատակ կաթողիկոսի իր բերանով ինձ պատմած բոլոր տեղեկութիւնները իր կենսագրութեան մասին»

«Ներսէս կաթողիկոսը իր կենաց վերջին տարիներումը ասաց ինձ թէ ես մտադիր եմ վեց ամիս ժամանակով Սևան ապահովութեան երթալու և իմ ժամանակի դէպքերը այնտեղ ապահովութեամբ գրելու, մանաւանդ Դաւիթի և Դանիէլի վէճերը ամբողջութեամբ և ամենայն ստուգութեամբ, որովհետև բացի ինձանից ոչ ոք կարող է ճշդութեամբ գրել»։ Ես վստահացայ ասելու նրան. «Վեհափառ Տէր, ո՞ գիտէ, կը յաջողի՞ արդեօք, ձեր այդ մտադրութիւնը թէ ոչ, եթէ կարելի է հրամայեցէք ինձ ամենայն երեկոյ ձեր լպարապորդ ժամանակը գամ ներկայանամ ձեզ, դուք բերանացի պատմեցէք և ես ամբողջապէս, եթէ Տէր յաջողեաց է, կը գրեմ»։ Շատ ուրախացաւ երանելին և ասաց. «Շատ ապրիս, որ այդպիսի եռանդ ունես»։ Այնուհետև ես սկսեցի գնալ ամենայն երեկոյ նրա մօտ պարապորդ ժամանակը և նա կարգով պատմեց ինձ իր մանկութենից սկսած մինչև կաթողիկոսական պատուով և աստիճանով Թիֆլիս գալը։ Եւ արդարև ես նպատակ ունէի գրելու այդ պատմութիւնը, ինչ որ նրանից լսած էի, բայց նրա մահից յետոյ երանելի Մատթէոս կաթողիկոսը թէ ինչ անտեղի խռովութիւններ յարոյց և խափանեց իմ ամենայն բարոյական և նիւթական ձեռնարկութիւնները յօգուտ ազգի և եկեղեցոյ այդ թողնում եմ բարեմիտ ազգայնոց դատաստանին։

«Իսկ այժմ ես չեմ կարող անել այն ինչ որ առաջ կարող էի, վասն զի իմ աչքս տկարացել է տեսութենից և ես ճնչված եմ տկարութեան և ծերութեան դառն լծի տակ։ Բայց անչափ ցաւում եմ որ այն բոլոր անցքերը, որոնց մէջ սքանչելի և ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան, ես պէտք է հետս դերեզման տանեմ։

«Ի միջի այլոց պ. Երիցեանը իր աշխատասիրութեան մէջ գրում է Ներսէսի գնալը Աբբաս Միրզայ արքայորդու մօտ. սակայն այդ անցքի մասին Ներսէսը ինձ այսպէս պատմեց թէ երբ որ Դանիէլ կաթողիկոսը վախճանեցաւ, Դաւիթականքը սաստիկ ուրախացան և գտան դիպող ժամանակ որ Դաւթին կրկին կաթողիկոս ընտրեն, այս պատճառով գնացին Աբբաս Միրզայի մօտ և ինձ մատնեցին, իբր թէ ես եմ բոլոր խռովութեանց պատճառը։ Աբբաս Միրզան ինձ տարաւ իր բանակը, որ Խորվիրապ էր, իմ անձս դատապարտելու և ինչպէս կարծիք կար, մինչև անգամ գլխապարտ անելու։ Երբ ես հասայ Խորվիրապ, իսկոյն Աբբաս Միրզան ատեան կազմեց, որ բաղկացած էր խաներից, նախարարներից և մելիքներից, Դաւիթ կաթողիկոսի ներկայութեամբը և սկսեց հարցաքննել, որպէս զի ինձ ըստ իրաւանց պատժէ։ Սակայն պէտք է նկատած որ իմ ճանապարհ ընկնելու միջոցին իմ բոլոր բարեկամները արտասվում էին ինձ վրա, կարծելով որ ես կրկին կենդանի չը պիտի վերադառնամ։ Ինչպէս վերն ասացի ատեանի մէջ ներկայ էին Դաւիթ կաթողիկոսը և նրա հետ ի միասին Հասան-խանը, երկուքն ևս իմ ոխերիմ թշնամիներս։ Գնացի, ընդմիջեցի և կանգնեցայ Դաւիթ կաթողիկոսի և Հասան-խանի մէջ, նրանց միմեանցից անջատելու համար։ Սկսվեց հարցաքննութիւնը. այն միջոցին երբ Աբբաս Միրզան ինձ հետ բարկութեամբ խօսել սկսեց, Հասան-խանը իսկոյն դարձաւ դէպի նա ինձ վրա անարգական բառերով այսպէս. «Նաիբի Սալթանաթ (թագաւորի որդի), այսքան խռովութեան շարժառիթը թէ տէրութեանց, թէ ժողովրդի և թէ հոգևորականաց մէջ Ն ո ւ ր ս ո ւ զ ն է» (այն է ա ն լ ո յ ս)։ Սակայն Աստուած ինձ այնքան սիրտ տուեց, որ ես չը վհատեցայ, և իսկոյն դարձայ դէպի Շահը հետևեալ համապատասխան բանով. «Շահը ողջ լինի, ասացի ես, բոլոր խռովութեան պատճառը Հասան-խանն է և Ա ն ա գ ե օ թ լ ի ն», փոխանակ ասելու էնագեատցի։ Կաթողիկոսը երկու գլխաւոր պաշտօն ունի. մինը եպիսկոպոս ձեռնադրելը և միւսը մեռոն օրհնելը, ուրեմն մենք հոգևորականքս պարտական ենք ընտրելու այն անձը որ այս երկու պաշտօնը կարող է սրբութեամբ կատարել և որն որ պէտք է լինի առաքինի, անաչառ, անբռնաբար, հայր և պաշտպան ժողովրդոց և ամենայն կատարեալ առաքինութիւններով լիքը, այն ինչ Դաւիթը բոլորովին զուրկ է այս վեսեմ յատկութիւններից։ Տէր իմ, խնդրեմ հարցնէք Հասան-խանին թէ՝ դուք ինչ իրաւամբ էք ընտրում Դաւթին կրկին կաթողիկոս, երբ նա անարժան է սոյն կոչմանը, որովհետև կաշառակեր է, զօշաքաղ է, բռնակալ, կողոպտող ժողովրդոց, հալածող միաբանից, որոց կէսը փախած են Բայազէթ, կէսը Թիֆլիս և միւս մասն ևս հալածական եղած իրանց բնակութեան տեղը ընտրած են վանքերը։ Կը խնդրեմ հարցնէք Հասան-խանին՝ եթէ դուք զաւակ ծնիք, կը թողուք որ հայոց մեռոնովը կնքեն, եթէ դուք որդի ունենաք, կը թոյլատրէք որ հայոց կաթողիկոսը նրան եպիսկոպոս ձեռնադրէ,—ոչ երբէք։ Ապա ուրեմն եթէ այս երկու հարկաւոր և վեսեմ պաշտօնը Հասան-խանին հարկաւոր չէ ուստի և նրան աւելորդ է այդ տեսակ սրբազան գործի միջամտելու և բոլոր խաներին դէպի մեզ զրդռելու շարժառիթ լինել։ Գուցէ թէ որ և իցէ անյայտ և աներևոյթ պատճառ կայ։ Մենք ունենք Աստուծուց հաստատված շահ, և երբ մենք յիշեալ երկու պաշտօնին արժանաւոր մարդ ընտրենք, այն ժամանակը խոնարհաբար կը յայտնենք ձերդ վեհափառութեանը։»

Այս խօսքերը աւարտելուց յետոյ Ներսէսը մի հրովարտակ է ներկայացնում շահին, որ Հուսէյն շահի հրովարտակն էր Էջմիածնի վրա գրված այսպէս թէ՝ ես Ցիսուսի անուամբը գընացի Հերաթ, հերաթացոց յաղթեցի և վերադարձայ աջողութեամբ, որոց մասին անա սոյն իմ հրովարտակս գրում եմ, որ ոչ ոք իրաւունք չունենայ Էջմիածնին բռնաբարելու, ոչ նախարար, ոչ իշխան, ոչ խառն և ոչ մահմեդական, որովհետև Էջմիածինը ես սորանով ազատում եմ ամեն նեղութենից և բռնաբարութենից և շահի գահը այսուհետև պարտական է ամենայն տարի ընծայաբերութիւն մատուցանելու սուրբ Էջմիածնի աթոռին։ Բայց ափսոս, ասաց Ներսէսը, որ ես երբ Բեսարաբիայից վերադարձայ, տեսայ գժբաղդաբար, որ այն հրովարտակը կորած էր և ես պատրաստ էի այդ հրովարտակ գտնողին 10 հազար բուբլի հատուցանել։ Բայց իմ բաղձանքս ի զուր անցաւ։ Յիշեալ հրովարտակը Աբբաս Միրզան կարդալուց յետոյ շատ զարմացաւ և բոլորովին փոխվեցաւ, ուստի և ես վստահացայ ասել նրան. «Ձերդ արքայական բարձրութիւն, եթէ շահի տունը Էջմիածնին ազատութիւն է շնորհում, ապա որքվ իրաւամբ Հասան-խանը կամենում է այսպիսի մարդոց բռնութեան տակ դնել Էջմիածինը. որովհետև սա Ներսն թագաւորին մտացը համեմատ ընտրում է այն մարդիկը, որոնք մէկ մէկ ապուռներ են, և ձգում է ողորմելի ժողովրդոց մէջ, նրանք նրանց արիւնը ծծում են և երբ ուռչում են, բերում է և մզելով արիւնը հանում և դարձեալ ձգում է ժողովրդոց մէջը. այսպէս նրանք ծծելով և ինքը մզելով, աղքատացրել է բոլոր ժողովուրդը, բայց թէ ուր են գնում այդ հարստահարութիւնները ոչ ոք գիտէ. ուրեմն կարելի է այսպիսի մարդը վերտին կաթողիկոս կարգել և շահի հաստատած Էջմիածինը քանդել։

Ներսէսի այս խօսքերը շատ հաւանեց Շահը և բոլոր ժողովրդականքը և սկսեց ասել բարձր ձայնով. «Բարաքեալլայ, ինչ որ խօսեց՝ ճշմարիտ է։ Ցետոյ հրամայեց մուշտակ բերել և հագցնել իրան։ Այնուհետև ամօթապարտ եղան իմ բոլոր թշնամիքը, ասաց Ներսէսը, սրանք զարմացան հակառակ իրանց ակնկալութեան, երբ որ տեսան ինձ մուշտակով և կենդանի դուրս եկած ատենիցը. իսկ բարեկամներիս ուրախութիւնը անպատմելի էր, որոնք սկսեցին փառք տալ Աստուծուն և ասել. «արդարը կազատվի որդուի որդայթիցը և նրա փոխանակ կը մատնվի անբարիչտը»։

Այնուհետև յայտնի չէ թէ ինչպէս միաբանութիւնը Եփրեմին ընտրեց կաթողիկոս և ով էր պատճառը և յետոյ յայտնեցին Դանիէլ կաթողիկոսին։ Նոյնպէս գրված չը կայ թէ Դաւթի մօրուսը սափրելուց յետոյ ինչպէս կարողացաւ Ներսէս եպիսկոպոսը հանդերձատան չեմքի տակից հանել այն վեց հազար ոսկին որ Դաւթի կաթողիկոսը պահած էր։

«Ի վերջոյ պատմեց երջանկայիշատակը և այս թէ Դաւթի կաթողիկոսը իր վերջին ճգնաժամին ապաշաւած կամենում էր յայտնել մի անգին պահված հարստութեան տեղ, որ միայն ինքն գիտէր. այս պատճառով մարդ է ուղարկում Եփրեմի մօտ կոչելու նրան այն մտօք որ այն գաղտնիքը յայտնէ նրան և նկատում է որ նա բաւական ուշացաւ, այս պատճառով երկրորդ անգամն է ուղարկում, բայց նրան քնած կը գտնեն, կը վերադառնան և կասեն որ արդէն ննջած է։ Ողորմելի Դաւթի կաթողիկոսը վերջին ճգնաժամին կասէ թէ «եթէ ոչ Տէր չինէ զտունն, ի նանիր վաստակին չինողք նորա», եթէ Աստուած չէ կամենում, ես ինչ կարող եմ անել։ Այս ասելով վերմակով կը ծածկէ իր երեսը և հոգին կաւանդէ։ «Ափսոս, ասաց Ներսէս կաթողիկոսը, որ այս հարստութեան տեղը ոչոք գիտէ և մինչև ցայժմ անյայտութեան մէջ ծածկված է։

Այս անցքերը նորին սրբազնութիւն Սարգիս արքեպիսկոպոսը ինձ պատմելուց յետոյ ասաց թէ ես արդէն գնացած եմ, Աստուած կը տայ դու ևս կը ծերանաս և կը պատմես այն ում կը ցանկանաս, եթէ դէպք պատահի, որպէս զի այս երևելի անցքերը ծածկված չը մնան։ Անա այս պատճառով և ես արժան համարեցի այժմէն իսկ յիշեալ անցքերը հրատարակելու, որպէս զի այս վեսեմ դէպքը ամենեքեան իմանան։

Մխիթար Ջալալեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

29 յունվարի

Կարդացի «Մշակի» մէջ Երևանից մի հեռագիր, որի մէջ ասված էր. «Տեսչի կոպիտ և անտանելի վարմունքից հինգ վարժապետ հրաժարվեցան իրանց պաշտօնից։»

Պարտք եմ համարում ինձ ասել որ հասարակութեան կարծիքը, աշակերտաց բողոքը, հոգաբարձութեան անաչառ քննութիւնը և վեհափառ կաթուղիկոսից ուղարկված քննիչի վերաքննութիւնը հաստատեցին որ պ. պ. Կար. Եղիլխանեանցը և Դ. Քալանթարեանցը իրանց տգիտութիւնը, ծուլութիւնը և կամակորութիւնը ծածկելու մտօք, խարդախ և քսու միջոցներով վարժապետներից երեքին էլ իրանց կողմը քաշելով, նախ և առաջ կանոնաւոր մանկավարժական ժողովների նիստերը յետաձգելու առիթ եղան և երկրորդ, անցեալ դեկտեմբերի 28-ի խռովութեան յարուցանող հանդիսացան, որի պատճառով էլ արձակվեցան դպրանոցից այդ երկու պարոնները միայն։ Իսկ միւս երեք ուսուցիչները թէպէտ և ուշ, բայց ի վերջոյ հասկանալով պ. պ. Եղիլխանեանցի և Քալանթարեանցի ոչնչականութիւնը, կրկին վերադարձան իրանց պաշտօնին։—Մի բարեհոգի մարդ էլ օգուտ քաղելով խռովասերների տկարամտութենից, որին պաշտօն էր խոստանում, որին պաշտպանութիւն և այսպիսով աւելի ու աւելի գըրգռում իմ դէմ վերոյիշեալ պարոններին.... Քեզ փոռք Աստուած, որ այդ նենգամիտ մարդիկ չը կարողացան մի օր անգամ խանգարել ուսումնարանի դասերի կանոնաւոր ընթացքը, այլ իրանց դուրս անելու հետևեալ օրը բռնեցին նրանց տեղերը աւելի լաւ մարդիկ։

Աւելորդ չեմ համարում ասել որ պ. Եղիլխանեանցը անցեալ սեպտեմբերից մինչև դեկտեմբերի 18-ը բնակվում էր ինձ մօտ. բայց տեսնելով որ չեմ կարողանում հասկացնել, որ իմ տանը բնակվելը չէ տալիս նորան իրաւունք առաւօտեան դասերի կիսին կամ վերջին քառորդին հասնել, չը կարողանալով հասկացնել նորան որ եթէ իրան այդ զանցառութիւնների մասին նկատողութիւն չանեմ, միւս վարժապետներին ևս ոչինչ չեմ կարող ասել. ես դեկտ. 18-ին խնդրեցի նրան դուրս գնալ իմ տանից, չը նայելով որ այդպիսով վնասեցի ինձ 250—300 բուբլի. իսկ նա, նոյն ամսվայ 28-ին, այսինքն

տան օրվայ ընթացքում, խարդախ հնարքներով, վարժապետներին ապստամբեցրեց իմ դէմ։ Աշակերտներին ես դրամական խոստումներ անելով կամենում էր իմ դէմ յարուցանել, բայց ճշմարտասէր աշակերտներս ոչ միայն մերժում են նորա առաջարկութիւնները, այլ գրաւոր կերպիւ յանդիմանում են պարոնի վարք ու բարքը, ասելով. «այդ վարմունքդ բարեմիտ դաստիարակի գործ չէ»։

Պարոն խմբագիր, այս մի քանի նկատողութեան հետ ուղարկում եմ պատճէնը այն յայտարարութեան, որը պատուել եմ ես հոգաբարձութեան և որից ընթերցողը կարող է տեսնել թէ արդեօք տեսուչն է կոպիտ և անտանելի թէ պ. Էդիլխանեանցը և իր գործիք Դ. Քալանթարեանցը։

Ցոյս ունեմ որ դուք ի սէր ճշմարտութեան կը հրատարակէք այդ։

Ս. Բէգ-Նազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան հրատարակութեան նոյեմբերի և դեկտեմբերի տետրակները (Отчетъ Кавк. Общ. сельск. хозяйства. № № 11 и 12)։

«Մշակի խմբագրութեան մէջ դարձեալ հաւաքվեցաւ մօտ 2000 ռուբլ յօգուտ «Արարատեան ընկերութեան»։ Իսկ եթէ հաշուենք այն 400 ռուբլ, որ ստանալու ենք Դաւալու գիւղից, գումարը քիչ կանցնի երկու հազարից։ Ուրեմն այս օրերս յոյս ունենք որ կուղարկենք «Արարատեան Ընկերութեանը» դարձեալ 2000 ռուբլ։

Վաղը կը տպենք Թիֆլիսի մէջ գտնվող Տերցակոբեանի ուսումնարանի աշակերտների նամակը։ Ընդունելով նրանց նուէրը յօգուտ Կ. Պոլսի «Համալսարանական» ընկերութեան, մենք կուզենայինք մի բան առաջարկել։ Թիֆլիսում հրատարակվում են չորս հայոց պարբերական հրատարակութիւններ և շատ լաւ կը լինէր որ աշխատանքի բաժանութեան համար և գործը հեշտացնելու համար հրատարակութիւններից իւրաքանչիւրը յանձն առնի թիւրքաց հայերի մի մի ընկերութեան համար նուիրատուութիւններ հաւաքել։ «Մշակը» գլխաւորապէս իրան նուիրել է «Արարատեան ընկերութեան» համար օժանդակութիւններ հաւաքելու թէև չէ հրաժարվում ընդունել նուիրատուութիւններ և միւս ընկերութիւնների համար։ Բայց եթէ մեր միւս երեք հայ հրատարակութիւնների իւրաքանչիւրը հաստատ կորոշի և կը յայտնի թէ որ ընկերութեան համար պիտի աշխատի, այն ժամանակ մենք կը նուիրենք մեզ միմիայն «Արարատեան ընկերութեան» գործին։

Մեզ գրում են ՋԱԼԱԼ-ՕՂԼՈՒՑ։ «Մի քանի ժամանակից այստեղ սովորութիւն է մտել այստեղի մի քանի ծառայող պարոնների մէջ, որոնք ազգութեամբ հայ չեն, բայց որոնք հասկանում են հայերէն, թէև չը գիտեն կարդալ և գրել մեր լեզուով, հաւաքվել հայոց շրջանների մէջ և բարձրաձայն կարդալ տալ «Մշակը»։ Այլազգի պարոնները իրանց մէջ փող են հաւաքում և ուզում են «Մշակը» բերել տալ»։

Դիմում ենք մեր Թիֆլիսի բաժանորդներին, որոնք համակրում են «Մշակին» խնդրելով նրանց որ աշխատեն տարածել մեր լրագիրը Թիֆլիսում, որտեղ նա համեմատելով շատ քիչ տարածվողներ ունի, քան թէ գաւառական քաղաքներից մի քանիսների մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

«Journal officiel» լրագիրը մի քանի հրովարտակներ է հրատարակել, որոնք բոլորն ի միասին յայտնում են, որ լուսաւորութեան նախարարը սկսեց իր նոր պաշտօնը։ Նոր մինիստրի նշանակվելով, ժողովրդական լուսաւորութեան գլխաւոր վարչութեան մէջ մի քանի նշանաւոր փոփոխութիւններ եղան. այդ փոփոխութիւնների հետ միասին, Փարիզի ձեմարանի առաջնորդն էլ փոխվեցաւ։ Լուսաւորութեան նախարարութեան մէջ եղած հինգ վարչութենից մէկը դադրեցաւ։

Հաւատացնում են որ «Journ. offic.» լրագիրը այս օրերս մի հրովարտակ կը հրատարակէ, որի զօրութեամբ նշանաւոր փոփոխութիւններ պէտք է լինեն բանակի գլխաւոր հրամանատարների մէջ։ Ամենքը փառք են տալի պ. Դրէվֆիին, որ նա այդպէս եռանդով օգուտ է քաղում իր իշխանութենից։ Պ. Դրէվի ժողովրդի այն ներկայացուցիչն է, որին եթէ ամեն կուսակցութիւնները հաւասարապէս չեն համակրում, գոնէ մեծ ակնածութեամբ են վերաբերվում դէպի դրա անձնաւորութիւնը։ Պ. Դրէվի առ հասարակ մեծ պատիւ է բերում թէ իր հայրենիքի հասարակական կարծիքին, և թէ իր բարձր պաշտօնին. բոլոր լրագիրները սրտով ցանկանում են, որ դա բոլոր իր իշխանութեան ժամանակ այդպէս գործունեայ, անկողմնապահ և մանաւանդ արդարադատ լինի։

Մակ-Մահոնը վերջապէս տեղափոխվել է Էլիսեան պալատից. Դրէվի շուտով կը գնայ այնտեղ։ Մի քանի օր առաջ Լէոն Գամբէտտա գնաց Դրէվֆի մօտ, և, այնտեղ թողնելով իր այցատոմսակը, ասաց որ նա պաշտօնապէս այցելութիւն կանէ հանրապետութեան նախագահին, երբ նա Էլիսեան պալատը կը տեղափոխվի։ Պ. Մարտելը, որ սենատի նախագահ է, այս օրերս գնացել է Լիւքսէնբուրգեան պալատը. ասում են որ նրա այցելութեան նպատակն այն է, որ նա կամենում է տեսնել թէ արդեօք սենատի ժողովների համար յարմարաւոր դահլիճներ կան թէ ոչ, որովհետև գիտաւորութիւն կայ, որ սենատը Փարիզ փոխադրվի։ Դեռ Լիւքսենբուրգեան պալատը չը գնացած, պ. Մարտել դիմել էր Գամբէտտային, որ նա Բուրբոնեան պալատի դահլիճներից մէկը սենատի ժողովներին նուիրէ. բայց այս վերջինը նրան մերժեց այդ։

ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսի «Turquie» ֆրանսիական լրագիրը հաղորդում է որ հայ անուանի անձներից բաղկացած մի պատգամաւորութիւն նորերում ներկայացաւ մեծ-վեզիրին։ Պատգամաւորութիւնը յարգանքով մեծ-վեզիրի ուշադրութիւնը դարձրեց այն իրողութեան վրա, որ օսմանեան կայսերական կառավարութիւնը դեռ ևս ոչինչ վճիռ չէ կայացրել հայոց Կ. Պոլսի պատրիարքի իր պաշտօնից տուած հրաժարման խնդրի մասին և այդ պատճառով հայոց համայնքի գործերը գտնվում են կատարեալ անկարգ դրութեան մէջ և աւելի էլ խանգարվում են անհանդստացնող քաղաքական լուրերի պատճառով, մանաւանդ Հայաստանի ներքին գաւառներից անդադար ստացվող անմխիթար տեղեկութիւնների պատճառով։ Մեծ-վեզիրը հանդստացրեց պատգամաւորութիւնը, յայտնելով նրան որ մի նոր խառն յանձնաժողով, որ բաղկացած կը լինի հայերից և մահմեդականներից շուտով ուղարկվելու է Հայաստան, տեղի վրա հանգամանքները հետազօտելու համար և որ տէրութիւնը ամեն հարկաւոր միջոցներ է գործ դնում, որպէս զի օսմանեան բոլոր հպատակները վայելէին հաւասար իրաւունքներ պետութեան մէջ։ Վերջապէս մեծ-վեզիրը յայտնեց ցանկութիւն, որ Ներսէս պատրիարքը յետ առնի իր հրաժարականը և որ շնորհ բերի Բ. Դուռը կառավարութեան և Հայաստան ուղարկվող խառն յանձնաժողովի հետ բանակցութիւններ սկսելու համար։

Գերմանական «Weser-Zeitung» լրագրում կարդում ենք հետևեալը։ «Թիւրքաց Հայաստանից այստեղ հասած հաւասի հաղորդութիւններից իմանում ենք որ դրութիւնը Հայաստանում շատ գոհացուցիչ չէ։ Քրիստոնեաների մի մասը որ ռուսների հետ գաղթած էին, որոնց չափազանց յոյսերը գուցէ չիրագործվեցան, այնու ամենայնիւ վերադարձան իրանց հայրենիքը։ Ռուսաց ագենտները Էրզրումի մէջ շարունակում են սերտ կապեր պահպանել հայերի հետ, երևի այն յոյսով որ ապագայում լինելու հանգամանքներում նրանց մէջ բարեկամներ գտնեն։ Անգլիական ագենտները աշխատում են, ուրիշ կողմից, հաշտեցնել հայերին իրանց այժմեան վիճակի հետ։ Դրամական միջոցների կատարեալ պակասութեան պատճառով Բ. Դուռը ստիպված է անորոշ ժամանակների յետ գցել իր մտադրված և Հայաստանին հանդիսաւոր կերպով խոստացած վերանորոգութիւնների իրագործումը։ Շատ ցաւալի իրողութիւն է Ղազանդաղի ապստամբութեան շարունակվելը և հայոց հոգևորականներին բռնի ոյժով դերի վերցնելը և նրանց Կ. Պոլիս բերելը։ Այդ բռնաբարութեան դէմ նոյն իսկ Կ. Պոլսի հայոց պատրիարքի բողոքները անզօր են յայտնվում։»

ԱՆԳԼԻԱ

Աֆղանիստանից եկած հեռագիրները հաղորդում են, որ գեներալ Բիդդալֆի զօրքերը գրաւեցին Ջերիշկ քաղաքը, որը գտնվում է գրեթէ 160 մղոն հեռաւորութեամբ Կանդահարից։ Այսպիսով ուրեմն համարձակ կարելի է ասել, որ Անգլիացիք այսօր տէր են Աֆղանիստանի մի քաւորդ մասին։ Չը նայելով այս բոլորին, Անգլիացոց տիրած երկրների մէջ դեռ մի քանի անմատչելի բարձրութիւններ կան, ինչպէս օրինակ Փասը, որոնք ապաստանարան են կազմում մի քանի դեռ չը նուաճված ցեղերի։ Անգլիացիք, որպէս զի չը ցրվեն իրանց ոյժերը, դադարեցրին իրանց ընթացքը, և սպասում են գարնան։

Բաղդը, որ աֆղանական պատերազմի ժամանակ այնքան սիրով ժպտում էր անգլիական բանակներին, նա նոյն աստիճան էլ չէ ժպտում հարաւային Աֆրիկայի զօրքերին, որոնք Զուլուսների թագաւորի (*) դէմ ունեցած պատերազմում մեծ հարուած ստացան։

Մի ամբողջ անգլիական գունդ, որ բաղկացած էր 11—12 հազար մարդուց, բոլորովին ոչնչացաւ Զուլուսներից։ Զուլուսները կատարեալ կերպով սպառնում են ամբողջ Նատալի գաղթականութիւններին. Կապի կառավարիչը մեծ տագնապով պահեստի զօրքեր է պահանջում եթէ ի նկատի ունենանք այն, որ ասում են թէ հարաւային Աֆրիկայում լորդ Շելմֆորդի հրամանատարութեան ներքոյ գտնված զօրքերի թիւը հասնում է մօտ տասն ու հինգ հազարի ուրեմն իսկապէս ասած մի գնդի կորուստը այնքան ծանր հետևանքներ չը պէտք է ունենայ, ինչպէս խօսում են մի քանի լրագիրներ, բայց միւս կողմից պէտք է ի նկատի ունենանք գաղթականների երկրի ահագին ընդարձակութիւնը, որ գրեթէ ամբողջ Ֆրանսիայի երկու երրորդական մեծութեամբ է, այն ժամանակ մեզ կարող է պարզ յայտնի լինել, որ տասն ու հինգ հազար զօրքը բաժանվելով այդ ահագին տարածութեան վրա, չէ կարող կատարելապէս ապահովել սարսափի մէջ ընկած ժողովրդի վիճակը։ Պատմում են, որ Զուլուսների թագաւոր Սէտիվայոյի զօրքերի թիւը հասնում է մօտ 40 հազարի։

*) Աւելորդ չենք համարում նկատել, որ առաջ այդ Զուլուսների գլխաւորին լրագիրները հասարակ Chef (առաջնորդ) էին անվանում, իսկ այժմ այդ մի և նոյն chef-ը յանկարծ թագաւոր է դառնում։ Երևի ոյժ տեսան։ Ասում են թիւրքին մինչև չը ծեծես, քեզ աղա (պարոն) չի ասի։

«Times» լրագիրը, խօսելով այդ պատերազմի մասին, մէջ է բերում լորդ Հարտինգտոնի այն խօսքերը, որ նա ասում է թէ ոչ ոք չէ կարող նախագուշակել թէ որքան գումար կը նստի այդ անակնկալ պատերազմը Անգլիայի գանձարանին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հռօմից հաղորդում են լրագիրներին, որ իտալական պարլամենտի յանձնաժողովների մէջ ընդունվեցաւ այն օրէնքը որ պարտաւորացնում է պսակվողներին նախ կատարել քաղաքական ամուսնութիւնը և ապա դիմել եկեղեցական ամուսնութեան հանդիսակատարութեանը։

—«Ind. Belge» լրագրին հեռագրում են Իտալիայից որ Լօրէտօ և Եսի տեղերում յայտնված է հռօմէական հանրապետութիւն։ Կառավարութիւնը հրամայել է այդ տեղերում զինուորված ոյժի օգնութեամբ հանել կարմիր դրօշակները։

—Մարօկոի սուլթանը, ինչպէս հեռագրում են եւրոպական լրագիրներին, անդամալոյծ է դարձել։ Երկիրը գտնվում է կատարեալ անիշխանութեան մէջ։

—Փարիզի քաղաքային վարչութիւնը նշանակել է 100,000 ֆրանկ օժանդակութիւն ներումն ստացած կոմունիստներին։

—Հին-Բայազէթից մեզ գրում են. «Անցեալ պատերազմը, որ շատ վնասներ հասցրեց Հին-Բայազիթին, այստեղի Արամեան ուսումնարանի փակման պատճառը եղաւ։ Ուսումնարանը քանդված է, նրա գրամագլուխը կողոպտված։ Այդ ուսումնարանի մէջ իւրաքանչիւր տարի սովորում էին մօտ 200 մանուկներ։» Նամակագիրը առաջարկում է հայերին նուէրներ հաւաքել դպրոցը վերականգնելու համար։

—Հին-Բայազէթից մեզ հաղորդում են, որ այնտեղի կառավարիչ Իւսուֆ-փաշա հրաման է ստացել 8 անձինքներից (հայերից) մանաւանդ կազմել, որ պէտք է կողոպտված հայ բնակիչներին վերադարձնէ իրանց սեփականութիւնը։ Իւրաքանչիւր թիւրք կամ քիւրդ պարտաւոր է տալ հային այն բոլորը, ինչ որ հայը նրան յանձնել է պահելու համար։ Բաւական է, որ հայը ցոյց տայ այդպիսի մի անձը և որոշէ իր սեփականութեան քանակութիւնը։ Մանաւանդ արդէն ընտրված է և սկսել է գործել։

—Հին-Բայազէթից մեզ հաղորդում են, որ Էրզրում վերադարձած բոլոր հայերը իրանց հետ զէնք են բերում, բոլորն էլ ոգևորված են և պատրաստ են պաշտպանել իրանց, եթէ հարկաւոր լինի։ Հին-Բայազիթում լուրէ տարածված, որ Տրապիզոն հասել է 7000 անգլիական զօրք և 2000 բեռ ալիւր և ցորէն։ Բայազէթ հասցրած է 90 արկղ փամփուշտներ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 փետրվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ գիւղացի Պրօկոֆիեվի հիւանդութիւնը, որ Բօտկինը ժանտախտի տեղ էր ընդունել, առողջապահական յանձնաժողովի բժիշկների կարծիքով երևում է, որ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ սիֆիլիտական բորբոքումն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 փետրվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր, 75 կ., երկրորդ 96 ր., 25 կ., երրորդ 95 ր։ 50 կ., չորրորդ 95 ր, 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 234 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 93 ր, 15 կ., երկրորդ 93 ր. ոսկի 8 ր. 37 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 23, 56 պէնս, Ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա 201 մարկ, Փարիզի վրա 248 ֆր։ Տրամադրութիւնը շատ ամուր է։

ԼՕՆԴՕՆ, 17/29 փետրվարի։ Սամարկանդի նահանգապետը հեռագրում է Կաուֆմանին, որ Աֆղանիստանից եկած մարդիկ յայտնեցին, որ Շիր-Ալի վախճանվեցաւ։

Խմբագիր — Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԹԷՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻՑ նոր ստացվեցան 100000 ֆունտ ֆուչանի և կեախտի թէյ սեփական փոխանակութեան 1 ր. 20 կ. մինչև 8 ր. ֆունտը։ Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, յոյս ունեմ ապագայում գնողներից նոյնպէս ոտանալ։ Ծախվում է մեծ քանակութեամբ և փոքր։ Փոստայի ծախսը ինձ վրա առնում եմ։ Հասցէն Միքայէլեան կամուրջ, «Кавказъ»-ի խմբագրատան տակ։ Վաճառական Ա. Պօլոսուխին։

3—10

ПОСТУПИЛА ВЪ ПРОДАЖУ КНИГА
ШАРАКАНЪ (ՇԱՐԱԿԱՆ)
Богослужебные Каноны и Пѣсни армянской восточной церкви, переводъ съ древне-армянскаго языка Н. Эмина.
Москва. 1879. Цѣна съ пересылкою 3 р. 50 к. Выписывать можно отъ переводчика, живущаго въ Москвѣ, близъ Красныхъ Воротъ, домъ Филитиса.

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵՆՑԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽՄՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ստացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՈՆՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿՐ ՄՆԱՆ։

35—75

MAISON DE COMMISSION
et d'exportation
NICOLAS AMIRAGOFF ET C-ie
16, Rue de la Grange-Batelière
PARIS
Կոմիսիոներական տուն ՓԱՐԻԶՈՒՄ։ Գրագրութիւն վեց լեզուներով։
Նիկողայոս ԱՄԻՐԱՂԵԱՆՑ

ՕՐԴՈՒԻԲԱԹՈՒՄ մեծաքանչ գործարանների տէր ԿԱՐԱՊԵՏ Բաբայեանցը կամենում է մի տնային ՎԱՐԺՈՒՀԻ (гувернантка) իր մանկանց համար։
Պայմանների մասին հարցնել «Մշակի» խմբագրատանը։

1—3

Особа, КОНЧИВШАЯ С. ПЕТЕРБУРГСКІЕ ПЕДАГОГИЧЕСКІЕ КУРСЫ (теоретическіе и практическіе), даетъ уроки по всѣмъ предметамъ гимназическаго курса и по новѣйшимъ языкамъ. Готовитъ къ экзамену Домашней Учительницы. Просятъ обращаться въ контору газетнаго агентства Шавердова.

Մի օրիորդ, ՈՐ ԻՒՐ ՈՒՍՈՒՄԸ ԱՒԱՐՏԵԼ Է ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ» (տեսական և գործնական), ընդունում է իւր վրա գիմնազիական կուրսի դասեր ամեն առարկաներից, նոյնպէս և նոր լեզուներից։ Պատրաստում է նոյնպէս քննութեան «տնային վարժապետուհութեան» պաշտօնին։ Դիմել «Նավերդեանի լրագրական գործակալութեան կանտորին։»

ԿՕՐՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԵՐԹԵՒԵԿ պատրաստում է երեխաներին ՄԻԶՆԱԿԱՐԳ բոլոր ուսումնարանների ՓՈՔՐ դասատուների համար։ ՃԱՇԻՑ ՑԵՏՈՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ։ Ֆրանսիերէն և գերմաներէն լեզուների գործնական և տէօրետիկական դասեր են տրվում։ Ուսումնարանը գտնվում է Վօրօնցօվսկայա Նաբերեժնայա փողոցի վրա, Բելեաեվի նախկին տանը, № 19.

1—3

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցողներ էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերդենովսկայա փողոց, տուն Բայանդուրովի։

2—10

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 թվին

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետևեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Դրվել կարելի է ՄԻԱՑՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ՈՒՆԵՑԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ" ՀԱԼԽՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԻՑՅՈՒՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԵՒ
ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսաւ յունվարի 8-ին 1879 թուականի։

Մանկական պարտէզը ընդունվում են մանուկներ, երկու սեռի էլ, 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկանները։

Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրոցում աւարտողները կարող են մտնել տղայք՝ տղայոց և աղջկունք՝ օրիորդաց դպրոցի առաջին դասատունքը։

Պարտէզն ու դպրոցը գտնվում են Վելեամինովսկի փողոցում Իշխան Ն. Ամատունու տանը. №—11։

ՓԵՏՐՎԱՐԻ 20 — ՏՆՏԵՍԱԿԱՆ — ԹԻՖԼԻՍ. 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(փետրվարի 19-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլիմպերիալը)	8	58
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1240	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	229	—
Մարսելի կուրսը 248—	100	—
Լօնդոնի կուրսը Օղեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ամէ 113 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	30
» միւս տեսակը.	7	20
» չաքար աւազը.	5	40
» տրանզիտը. .	6	20
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. .	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուչի . . .	7	50
» թարաքամի .	4	20
Ալիւրը Շորագալու .	1	70
» Երևանի. . .	—	—
Գարին	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ. .	200	—
Կախետունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոմ.)	40	—
Ֆրիզոնը (լաստը) Ագուլեաց	55	—
Կօֆէն մօկօի. . . .	27	—
» Լիանի . . .	22	—
» Մարտինկոյին	18	—

ՀՍՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ, ԴՊՐՈՑ
(Վերայի վրա № 38)

Օրիորդների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ գարձով, իսկ չաբաթ օրներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի ոգջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օր երից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ. .	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկիւչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . , .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վենեական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վենեական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վենեական և կաշու հ., Բէյլս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—Կ. ՊՕԼԻՍ. Հ. Ստացանք ձեր նամակը և հասցէն։ Շնորհակալ ենք աշխատանքների համար։ Այդտեղի լրագիրները վաղուց չենք ստացել. «Մշակ» ամեն օր ուղարկում ենք։

—ՎԱՆ. ***. Նամակը ստացանք։ Շնորհակալ ենք։ Լաւ են մտածել այդտեղ երիտասարդների խմբագրութեամբ հրատարակվելի լրագիրը անկախ անել յայտնի ազդեցութենից։ Էրզրումի մեր թղթակցից ոչինչ տեղեկութիւն չունենք։ Հաղորդակցութիւն կապցէք նրա հետ։

—ՎԱՆ. Ս. Ձեր նամակը նոյնպէս ստացանք։ Շնորհակալ ենք։ Թիւրքիայից եկող բոլոր նամակները կարևոր անհրաժեշտութիւն են դարձել մեր կարդացողների համար։

Дозволено Цензурою 19 Февраля 1879 г. Тифлисъ
Տպարան Գ. Մարտիրոսեանցի
Типографія Мартиросіанца